

ԽՈՍՔ ՏԻԱՐ Ն. ԽԱՇՄԱՆՅԱՆԻՆ

«Հայրենիք» օրաթերթի 1957 թվականի փետրվարի 7-ի, 8-ի և 9-ի համարներում կարդացինք ձեր «սրտի խոսքեր»-ը, բաց նամակի ձևով ուղղված Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին:

Ձեր այդ «բաց նամակ»-ում բարի կամեցողության ինչ որ մի լար կար: Ուստի, Նորին Ս. Օծուխյան Ս. Ս. Վազգեն Ա Կաթողիկոսի բարեհաճ համաձայնությամբ, ուզում ենք պատասխանել ձեր նամակին, փորձելով մեր խոսքը հասցնել բոլոր նրանց, որոնք ընդունակ են և պատրաստ՝ «սրտի խոսք» լսելու:

Վերջին մեկ տարվա ընթացքում ուրիշ բաց նամակներ և հարցումներ ևս հրատարակվեցին արտասահմանի որոշ մամուլում: Այդ գրությունները, թեև ըստ ձևի Նորին Ս. Օծուխյան Ս. Ս. Վազգեն Ա Կաթողիկոսին էին ուղղված, — գեթ նրանք, որոնք ծանոթ են մեզ, — սակայն իրականում Ս. էջմիածինը դատապարտելու և վարկաբեկելու միտումն ունեին միայն և ըստ էության ուղղվել էին ընթերցողներին՝ ամբողջաին տրամադրություն և մթնոլորտ ստեղծելու դիտավորությամբ: Բոլոր այդ պարագաներում հողվածագիրները դիմում էին լրագրական էթանագրին ձևերի, որոնք, մտածում ենք մենք, չպետք է գործածվեին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդեպ:

1) Նախ, սակայն, մի հարցում:— Արդյո՞ք ձեր և մեր սրտերը իրենց հուզվածություն և բարի կամեցողությամբ պիտի կարողանա՞ն որևէ բան փոխել ստեղծված առարկայական իրականության մեջ, Արդյո՞ք այն կողմը, որի ա-

նունով խոսում եք, բաժանո՞ւմ է ձեր «սրտի խոսք»-ը: Տեսե՛ք, ինչո՞ւ հեռու դնանք, Նույնիսկ ձեր հողվածաշարքի վերջում, խումբագրությունը գրել է: «Այնքան միամիտ չենք մենք հավատալու համար, թե նման կոչերը որևէ նշանակություն ունին: Կիլիկիո Կաթողիկոսության շուրջ ստեղծված ողբերգությունը՝ նորագույն ապացույցը Վազգեն Կաթողիկոսի գործունեության և հետապնդած մոթնապատակներու մասին»: Ձեր կողմի մտայնությունը բնորոշող «հեղինակավոր» այս ճշտումից հետո, այլևս ի՞նչ արժեք և ի՞նչ խմաստ կարող են ունենալ ձեր «սրտի խոսք»-երը: Եվ դեռևս ինչե՞ր, ինչե՞ր կարող էինք ավելացնել, մեջբերումներ անելով «Հուսարներ»-ից, «Ազդակ»-ից, «Արևելք»-ից և ձեր «Հայրենիք»-ից: Ել չենք խոսում Կարո Գևորգյան անունը կրող հողվածագրի մասին, որը Նորին Ս. Օծուխյան դեմ ձեր մամուլում հրատարակված գրությունների շարքում ամենատխուր տեղն է գրավում:

Եթե իրոք այս է ձեր կողմի կեցվածքը Մայր Աթոռի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդեպ, արդյո՞ք անօգուտ չեն մեր էլ սրտի խոսքերը:

2) Դժբախտությունն այն է, որ եղան և կան մարդիկ, որոնք, մտածված կերպով, օմիամիտ չեղան հավատալու համար, թե նման կոչերը որևէ նշանակություն ունին: Եվ ավելին՝ նրանք ծաղրի առարկա դարձրին Ամենայն Հայոց Կաթողիկոսի «նման կոչերը» առաջին իսկ օրից: Ձեր կողմը ի վիճակի չեղավ տեսնելու և հասկանալու մեր

եկեղեցու կյանքի մեջ, մեր Մայր Աթոռի ժողովում ստեղծված նոր իրադրությունը, չկարողանալով ձեռքազատվել անցյալ նախապաշարումներից և քաղաքած մտայնություններից: Մտային այս վիճակը հոգեբանորեն բացատրելի է թերևս, սակայն ոչ թույլատրելի՝ Ազգը ղեկավարել կամեցող կազմակերպությունների համար, որոնք պատասխանատվության զգացում պետք է ունենան Ազգի և պատմության առաջ:

Ձեր «սրտի խոսք»-երը ընթերցելով այն տպավորություն ունեցանք, թե դուք չեք կարողացել «Հոսաբեր»-ի և «Ազգակ»-ի անցյալ տարվա փետրվարի և մարտի համարները, որոնց մեջ նշանավոր հանդիսացավ «Հոսաբեր»-ի «Կրեմլը Անթիլիասում» խմբագրականը: Դրան հաջորդեցին ուրիշ հոդվածներ և հոդվածաշարքեր, ղեկավար քաղաքական գործիչների ստորագրությամբ, որոնք պարզ և հստակ կերպով հետապնդում էին միևնույն նպատակը, այն է՝ էջմիածինը ցույց տալ որպես միջազգային լրտեսության կենտրոն, Ամենայն Հայոց Կաթողիկոսին որպես քաղաքական գործակալի և արտասահմանի՝ Մայր Աթոռին հավատարիմ մնացող հոգևորականների և ազգային իշխանության անդամներին՝ «հինգերորդ զորասյուն»-եր տվյալ երկրներում, և այլն: Թեթև թեթեւ վերջին տարվա ձեր մամուլը և դուք ավելին էլ կգտնեք: Այդ «գլխավանդիտական» ռազմավարությունը շարունակվում է մինչև այսօր ևս: Մեզ ծանոթ վերջին օրինակն է ձեր «Հայրենիք»-ում հրատարակված «էջմիածնի տպարանի կեղծիքը» խորագրով հոդվածը, խմբագրի ստորագրությամբ, որ վերջնական է այս եզրակացությունը: «Ձեռնարկելով էջմիածնի տպարանի այս հանգանակության, անխղճորեն կշահագործեն ամերիկահայ գաղութին միամտությունն ու եկեղեցասիրությունը և Մայր Աթոռին անոմալ դրամ կհավաքեն, իրապես խորհրդային կառավարության տպարան մը նվիրելու և անոր պրոպագանդային նպատակներ համար»:

Արդ, պ. Խաչմանյան, ձեր սիրտն ասելիք խոսք չունի՝ այս խմբագիրներին և հոդվածագիրներին:

Ահա ևս մի նմուշ՝ Մայր Աթոռի նկատմամբ ձեր կողմի գործելակերպի: Այս օրերին կարդացինք «Հոսաբեր»-ի և «Ազգակ»-ի հունվարի 25-ի համարը (գծախտաբար արտասահմանյան թիթերը շուրջ մեկ ամիս ուշացումով ենք ստանում), որտեղ «Հարցում մը Վեհափառ Վազգեն Ա-ի» խորագրի տակ գրված կար հետևյալը. «Երուսաղեմի Աթոռի նախորդ տեղապահ Նղիշն արքեպիսկոպոս հայտարարած է Ամմանի մեջ, թե էջմիածնա-Գերագույն Հոգևոր խորհրդին կողմի կարևոր

գումար մը տրամադրված է Դամասկոսի մեջ ճանկախ Կաթողիկոսություն մը հաստատելու համար ի հարկին»: Եվ ապա ձեր թերթերը հարց են տալիս Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ «Ծի՞շտ է այս լուրը»:

Իհարկե, թե՛ «Հոսաբեր»-ը և թե՛ «Ազգակ»-ը լավ գիտեն, թե ճիշտ չէ այս լուրը, սակայն, այնուամենայնիվ, նրանք հրատարակում են այն, Ավելին, նույն հոդվածում իսկ, «Ծի՞շտ է այս լուրը» հարցը տալուց հետո, առանց պատասխանի սպասելու, իրենց հարցումը հաստատված իրողություն հռչակելով, մի քանի տող ավելի ներքևում հանդուս են աթի եզրակացության, թե Ամերիկայում հօգուտ Ս. էջմիածնի տպարանի հանգանակված «կարևոր գումարը» հատկացվելու է վերահիշյալ նպատակին:

Տեսե՛ք, ի՞նչ հեշտ է ձեր կողմի խմբագիրների համար «վարպետորեն» մեկ քարով երկու, երեք թռչուն խփել, այն է՝ նախ կասկածելի դարձնել Մայր Աթոռը՝ Կիլիկյան Աթոռում ծայր տված պաշարը որպես հովանավորողի և ֆինանսավորողի, և երկրորդ՝ փորձել ձախողեցնել Մայր Աթոռը՝ տպարանով օժտելու մեր սուրբ գործը, և երրորդ՝ նաև կասկածելի դարձնել, հայս օտար իշխանությունաց, տպարանի հանգանակությունը կազմակերպող անձանց, կազմակերպություններին և բոլոր նվիրատուներին:

Տակավին ուրիշ մեկնությանց կարիքն ունի՝ ձեր սիրտը:

3) Խոսում եք Ամենայն Հայոց Կաթողիկոսի «կողմ» լինելու մասին և ասում՝ «կողմի դեմ կողմ եղաք»: Ծի՞շտ չեն ձեր տեղեկությունները, ճիշտ չէ ձեր այս հաստատումը: Իրողությունն այն է, որ Վեհափառ Հայրապետը կամեցավ լինել այն, ինչ դուք ներկայացնում եք ձեր բաց նամակում որպես ձեր մտածումն ու թելադրանքը, այն է՝ «կողմերն վեր և ազատ մնալ»: Դուք ավելացնում եք՝ «արդարության տարրական պայմանն է, որ լավին երկու կողմերն ալ: Այդ երկու կողմերը լսելի ետք է միայն, որ արդար և իմաստուն դատավորը հավանաբար ի վիճակի կդառնա դատելու երրորդ կողմ մըն ալ՝ ճշմարտության կողմը»: Եվ եզրափակում եք՝ «Վեհափառ, ա՛յդ է. Ձեր գործը: Ա՛յդ է, որ Ձեզմե կսպասեն, Ձեզմե կպահանջեն Ձեր փողովորդը, հա՛յ փողովորդը»:

Ե՛տ մ ճիշտ, շա՛տ գեղեցիկ, շա՛տ բարի: Բայց, պ. Խաչմանյան, ի՞նչ էր արդյոք Վազգեն Կաթողիկոսի ասածն ու արածը Անթիլիասում, գիշեր-ցերեկ ութ օր շարունակ, եթե ոչ, վեր մնալով կողմերից, հանդիսանալ երրորդ կողմ, Իր շուրջ հավաքված բարձրաստիճան բոլոր հայ հոգևորականների հետ համախորհուրդ՝ երկու անհաշտ կողմերի

միջև միության կամուրջ ստեղծելու իղձով: Դուք գրում էք, թե Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարող էր և պետք է, որ լիներ երկու կողմերի միջև «դատավոր»-ի դիրքի և դերի մեջ, և որի վճիռը պարտադիր լիներ երկու կողմերի համար որպես ճշմարտության վճիռ: Սակայն Վազգեն Ա Կաթողիկոսը, փափկանկատությունը, հեռատեսությունը և լավատեսությունը, Ինքն Իրան քույլ չտվեց վճիռ արձակող դատավորի դեր ստանձնել և ոչ ոքի հետ հրամայական շեշտով չխոսեց:

Վեհափառի կեցվածքն ու գործելու կերպը եղավ՝ ա) ոչ մեկ կողմի հետ չլինել, բ) հայրական սիրով և համբերությամբ լսել երկու կողմերից էլ, գ) դիրք ճշտել Պատրիարքական Աթոռների և եպիսկոպոսների հետ հաճախորհուրդ, դ) առաջնորդվել Նկեղեցու և Աղգի ընդհանուր շահերից, ջանալով այդ գեղազույն շահերի ճշմարտությունը լսելի դարձնել, այն ոգով, որով հին հոռմայեցիք վտանգի պահին իրենց ներքին վեճերը մի կողմ թողած, գոչում էին. «*Salus reipublicae suprema lex est*»¹:

Ինչ կկամենայիք, որ աներ Վեհափառը, երբ կողմերի հոգեբանությունն ու կարգախոսն էր՝ «կա՛մ մեզ հետ, կա՛մ մեզ դեմ»: Գոնե Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ այլ կերպ պետք էր վարվել, բոլորն էլ անխառն:

4) Ամենքին հայտնի է, որ Անթրիախսում Վեհափառ Հայրապետը, հակառակ այն բանի, որ Իր փետրվարի 14-ի կողը լսելի չէր եղել, առանց Իր սրտի ցավը և վրդովմունքը ցույց տալու, հայրաբար փափագեց ձեր կողմի հետ մտերիմ կերպով խոսքի նստել փետրվարի 16-ին: Այդ խոսակցության ներկա են եղել պ. պ. Հրաչ Փափազյանը, Մովսես Տեր-Գալուստյանը, դոկտ. Գալազյանը և Գասպար Գասպարյանը: Այլիկ քան երեք ժամ տևող սրտաբաց խոսակցությունից հետո հանգել են այն Վեցրակացության, որ հնարավոր է կողմերի միջև հասկացողության եզր գտնել, և նրանք Վեհափառ Հայրապետից հրաժեշտ են առել լավազույն տրամադրությունների տակ, և նույնիսկ պ. Հ. Փափազյանը ցանկություն է հայտնել մի քանի օր հետո առանձին տեսակցության համար Վեհափառին ներկայանալ: «Աղգալիք»-ն իր լեզուն փոխել էր հաջորդ օրը, և նույնիսկ հերքում էր հրատարակել իր մինչ այդ դրածների համար: Երկու օր վերջ, սակայն, ամեն ինչ գլխավոր էր շրջվել և Վեհափառին հայտնի էր դարձել, թե բանակցությունները տրևել դրական արդյունք չէին ունեցել, և թե հիշյալ կողմը այլևս խոսքի անգամ նստել չէր ցանկանում: Պ. Փափազյանն

այլևս չէր երևացել, հակառակ իր խոստման, և «Աղգալիք»-ն իր հարձակումները վերսկսել էր առավել սաստկությամբ: Այնուհետև բոլոր ի գործ դրված ճիգերը և սրտառու կոչերը ծեծունազարդ Գարեգին սրբազան պատրիարքի, ինչպես և մյուս բոլոր բարձրաստիճան հոգևորականների՝ ապարդյուն էին մնացել: Սրտի ի՛նչ խոսքեր ասվեցին այդ օրերին ձեր կողմի հոգևորականներին և ղեկավար աշխարհականներին, բայց նրանք մնացին անդրգլխի՝ իրենց խղճի վրա քար դրած:

Ու, պ. Խաչմանյա՛ն, դուք, այս բոլորը լավ գիտե՞նալով հանդերձ, խորհում եք, թե Ամենայն Հայոց Հայրապետը պետք էր անտեսել՝ Կրիկյան միաբանության մեծամասնության կամքը, պետք էր արհամարհել՝ Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի Պատրիարքական Աթոռների տեսակետներն ու կեցվածքը, պետք էր ուռնահարել՝ մյուս կողմի բոլոր շոսանքները, չպիտք էր նկատի առնել ժողովրդի մեկ խոշոր զանգվածի—բոստ շատերի՝ մեծամասնության—կամքը: Մի՞թե այդպիսով է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կողմ չպիտի լիներ: Պարզ առած, դուք Վեհափառին ուզում եք ստել. «Ձերը Վեհափառությունը մեր կողմն անցնելու էր ընդդեմ մեր հակառակորդ կողմի»: Եվ շատ հավանաբար պ. Հ. Փափազյանի փետրվարի 16-ի հուզիչ կոչերի իմաստն այս էր, երբ նա նորին Ս. Օծությունը դիմել էր կրկին և կրկին անգամ հետևյալ խոսքերով. «Վեհափառ, օգնեցե՛ք մեզի»:

Այսպիսով է, որ դուք, պ. Խաչմանյա՛ն, մտածում եք լուծել ստեղծված անել կացությունը: Եթե օգնության խնդրի մասին էր խոսքը, ապա ուրեմն երկու կողմերն էլ, իրենց համեցաշխության ձգտող ճիգերով, իրենք պետք է օգնեին և՛ Մայր Աթոռին և՛ Վեհափառ Հայրապետին:

5) Ձեր հողավածում, խոսքն ուղղելով Վեհափառ Հայրապետին, գրում եք. «Գոնե մեկ անգամ լսելիք ցարդ անտեսված մյուս կողմն ալ»:

Թույլ տվեք հաստատել, որ այդ չի համապատասխանում իրողության: Նախ որ, Վեհափառ Հայրապետը Անթրիախսում լսեց այդ «մյուս կողմն ալ» փետրվարի 16-ին, ինչպես վերև նշվեց: Ապա, տեսական կերպով Վեհափառ Հայրապետը լսում էր ձեր կողմին, արտասահմանյան ձեր մամուլի բերաններով, լսում էր այնպիսի խոսքեր և արտահայտություններ, որոնք միայն վիշտ էին պատճառում նրան:

Վեհափառ Հայրապետը Անթրիախսից մեկնեց Կահիրե և Ալեքսանդրիա, որտեղ նա ցանկացավ ու միջոցներ փնտռեց՝ տեսակցելու ձեր կողմի հետ ևս ու լսելու նրան,

¹ «Հայրենիքի փրկությունը գերագույն օրենք է»:

բայց ոչ ոք չմոտեցավ: Նույն պարագան կրկնվեց նաև Ֆրանսիայում: Միայն դեպի Ս. Էջմիածին վերադարձի Իր ճանապարհի վրա, մայիսի 4-ի երեկոյան, Փարիզի հայոց պաշտոնողարանն էր եկել «մյուս կողմ»-ի պատասխանատու ներկայացուցիչ պ. Ս. Թովմասյանը՝ խորհրդակցելու ստեղծված անկկացության մասին, երբ արդեն շատ ուշ էր և ոչ մի հնարավորություն չէր մնում մտածելու և ելք գտնելու մի քանի ժամվա մեջ: Հաջորդ օրը, մայիսի 5-ի առավոտյան, Փարիզից դեպի Մոսկվա էր մեկնում Վեհափառ Հայրապետը:

6) Ձեր հողվածաշարքում նույն մտածումն եք արտահայտում նաև Ամերիկայում ձեր անջատյալ եկեղեցիների տխուր կացության նկատմամբ: Դուք գրում եք. «Ավելի քան համբերող այս հատվածը կապասն, որ Դուք փնտռեք դիմքը. կապասն, որ Դուք հետաքրքրվիք իր կրոնական, բարոյական կարիքներով»: Այա հարց եք տալիս, թե՞ ի՞նչ է արել Ամենայն Հայոց Հայրապետը ցարդ այդ մասին, հարց, որը «ստիպողաբար դարձան պահանջող խնդիր» է, ձեր իսկ բառերով ասած:

Տեղին չէ՞ արդյոք, պ. Խաչմանյան, որ ձեր այդ հարցին մեր առաջին պատասխանը լինի մի այլ հարց, ուղղված ամեն մի ազնիվ բարի:— Արդյո՞ք կարելի է երևակայել Ամենայն Հայոց մի Հայրապետ, որը մերժի միացումը՝ իր եկեղեցուց բաժանված մի հատվածի: Մի՞թե Մայր Աթոռն է եղել այդ բաժանման պատճառը, և կամ՝ մի՞թե Մայր Աթոռը ցանկացել է հավերժացնել այդ բաժանումը, մի՞թե Մայր Աթոռը մինչև այժմ մերժել է միության որևէ փորձ, և վերջապես՝ ծանոթ չէ՞ ձեզ, թե անցյալում միության մի շարք առաջարկներ են եղել և փորձեր են կատարվել Մայր Աթոռի նախաձեռնությամբ, Մայր Աթոռի փափագով ու հրահանգով:

Խոսելով այստեղ միայն վերջին տարիներին մասին, այդ ցավոտ հարցի լուծման առնչությամբ, պետք է ասել, որ Վեհափառ Հայրապետը, Իր գահակալության առաջին իսկ օրերից, «փնտռած է» ձեզ, և նրա ցանկությունը շատ զեղեցկորեն արտահայտվել է նույնիսկ Հայրապետական անդրանիկ սրբատառ կոնդակում. «Ենչքա՞ն պիտի բղձալինք, որ Մեր հայրապետական այս խղճի խոսքերը ցարժեին սրտերը բոլոր անոնց, որոնց մոտեցրեց անհույս ու անել հաճախեցինք: Մենք, սիրով տոգորված, ջերմապես պիտի աղոթենք հաճապագ, որ Տերը լուսավորե գաղտնիք և հարթե հաշտության հաղթական համբան»:

Սակայն բավական չէ միայն, որ Վեհափառ Հայրապետը բարի հովիվ նման Իր «կորած ոչխար»-ի ետևից գնա, այլ անհրաժեշտ է նաև, որ «մոլորված ոչխար»-ը իր մոլորված լինելու գիտակցությունն ունենա, այլապես նա կշարունակի մնալ «կորած ոչխար»: Դժբախտաբար բաժանված կողմի մեջ կա ստեղծված մի հոգեբանություն, որին դուք էլ ձեր հերթին տուրք եք տալիս, պ. Խաչմանյան, երբ գրում եք հետևյալ տողերը. «Ամբողջ թեմն է, որ բաժանված է երկուքի: Նվ Մայր Աթոռը այդ կեսերին մեկուն միացած, մյուս կեսին դեմ դիրք բռնած է»: Տեսնո՞ւմ եք, Պետրոս պատմությունն է, որ կրկնում եք այստեղ էլ՝ կողմի դեմ կողմ լինելու պատմությունը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հազար վեց հարյուր տարիների պատկանելի մի հաստատություն է, ամուր կանգնած իր կոյնան և առաքելության վիճի վրա: Համազգային հաստատություն է այն, բարձր կանգնած «կողմ»-երի թելադրանքից և շահերից: Մայր Աթոռը երբեք կողմ չի եղել ո՞չ չի կարող լինել. նա դրո՞ծ չի ունեցել ու մի «կողմ»-ի հետ որպես այդպիսին և չի ուզում ունենալ: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ճանաչում է միայն մի կողմ՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին իր հավատացյալ ժողովրդով: Ով հավատարիմ է այդ եկեղեցուն և նրա գերագույն իշխանության, թող մերձենա և մտնի այդ սուրբ հաստատությունից ներս. ոչ ոքի առաջ փակ չեն նրա դռները, ու բոլորն անխտիր սիրով են ընդունվում այնտեղ:

Ավելին, Մայր Աթոռը միշտ պատրաստ է եղել ու պատրաստ է փնտռելու մոլորյալին ու վորուսյալին՝ զոհողության իսկ գնով. բայց նա չի կարող կորուսյալին փնտռելու աշխատանքում միանալ կորածին, գիտակցելով, որ դա իրեն դեպի կորուստ տանող ճանապարհն է:

Հակասության մեջ եք դուք, Պ. Խաչմանյան: Նախ ասում եք, թե «այս հատվածը կապասն, որ Ամենայն Հայոց կաթողիկոսը փնտռե դիմքը»: Ուստի ընդունում եք, թե այդ հատվածը «կորուսյալ ոչխար»-ի է նման, և հովիվն է, որ պետք է նրան փնտռի: Բայց դրանից հետո ավելացնում եք. «Մայր Աթոռը այդ կեսերին մեկուն միացած, մյուս կեսին դեմ դիրք բռնած է»: Դրանով ի՞նչ եք ուզում ասել, ո՞վ ո՞ւմ պետք է փնտռի: Երկսից մեկն է ճիշտ: Կա՞մ այն է, որ բաժանված հատվածն է, որ պետք է փնտռվի, գտնվի և վերադարձվի ամբողջին՝ հոտին, և կամ հոտն է, որ իր հովիվով մեկտեղ պետք է գնա, միանա «կորած ոչխար»-ին: Ձեր կողմը, պ. Խաչմանյան, այս մտայնության մեջ

է ապրում և գործում, և այս մտայնությունն է, որ պետք է փոխվի, որպեսզի իրոք յուրաքանչյուրը կարենան իրենց տեղը գտնել ու իրենց դերը կատարել — հովիվ, հոտ և ոչխար:

Նորին Ս. Օծովություն Վեհափառ Հայրապետի անցյալ տարվա փետրվար ամսում արտասահման ուղևորությունն ու Անթիլիաս գնալը ի՞նչ նպատակ էին հետապնդում, եթե ոչ՝ գերագույն ճիգով մոտենալ բոլորին, լսել բոլորին, ճանաչել բոլորին, ու հայրական սիրով ողջունել բոլորին առանց խտրության, իբրև Հայր ու Հովվապետ, առանց մի անգամ իսկ հիշեցնելու «կորուսյալ ոչխար»-ի առակը, ոչ իսկ զգացնել տալու այն, իր արտասահմանյան ուղևորության ամբողջ ժամանակամիջոցում:

Վեհափառ Հայրապետին մոտեցող ձեր կողմի ներկայացուցիչներին ո՞ր մեկն արդյոք տարբեր բան զգաց և տարբեր վերաբերմունք գտավ Նորին Ս. Օծովությունից:

Արտասահման մեկնելով, Վեհափառ Հայրապետը վստահ էր, թե այն հայրենասերները, որոնք գաղափարական տարբեր դիրքերի վրա էին կանգնած քան Հայաստանի պետական իշխանությունը, պիտի իմանային այս միակ առիթը օգտագործել՝ ապացուցելու համար իրենց էջմիածնասիրությունը, եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը: Սակայն ձեր կողմը ոչ միայն այդպես չվարվեց, այլ ընդհակառակը, ճիշտ հակառակա ուղղությամբ շարժվեց և գործեց: Գիտակցորեն, ամեն ինչ չափած ու ձեւաված կերպով նա իրեն հակադրեց Մայր Աթոռին և Հայաստանյայց եկեղեցուն:

Ծանոթ է անշուշտ ձեզ, թե Վեհափառի վերադարձից հետո, երբ Անթիլիասյան հակամարտությունները հետզհետե ծավալստացան և երկփեղկվան ալիքի ու ալիլի խորացումը ժողովրդի մեջ, և մասնավորապես երբ այստեղ իմացվեց, թե ձախողվել են համաձայնության գալու փորձերը, — Մայր Աթոռի կամքից և գիտությունից անկախ, — Վեհափառը թույլ տվեց մի փրկարար ճանապարհ, Մայր Աթոռ հրավիրելով կողմերի ներկայացուցիչները, որպեսզի հաշտություն գտանա և օծումը կատարվի Ս. էջմիածնում կամ Անթիլիասում, ըստ նրանց հայեցողության: Զեր կողմը պետք էր հասկանալ թաքուկ այս պատեհությունը, որ ներկայանում էր իրեն համար Հայրենիք գալու և տեսնելու Հայրենի երկիրը այնպես, ինչպես այն կամեր օրերին: Մենք վստահ էինք, թե այս հրավիրը և ռեզոլուցիոն, որովհետև, որպես հայ մտածելով, այն պետք էր ընդունվեր: Վերջին երեսուցուկ տարիների ընթացքում առաջին անգամն էր, որ նման հրավեր էր կատարվում Մայր Աթոռից, և հավատացե՛ք, որ

Մայր Աթոռը բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք էր առել՝ հարթելու համար այս հրավերի ճանապարհը: Ով որ կամենար, պիտի կարողանար գալ, ապահովված էին բոլորի համար անխտիր ամեն դուրսվյույն ու պայմաններ, և ամենահարգալից վերաբերմունք՝ անկախ այլևայլ նկատառումներից, և անշուշտ ոչ ոք նույնիսկ չպիտի փորձեր որևէ մեկին որևէ տեսակետ պարտադրել:

Բայց արդյո՞ք ձեր կողմի ներկայացուցիչները ինչո՞ւ մերժեցին Ս. էջմիածին գալ, ինչո՞ւ մերժեցին Մայր Հայրենիք գալ: Այս հարցը կապարի ծանրությամբ նստել է Վեհափառի սրտի վրա: Կարող էին գալ, նստել, խոսել ու լսել միմյանց, մասնավոր լսել Վեհափառ Հայրապետին, և այդ բոլորից հետո, անհամաձայնության դեպքում, մնալ իրենց տեսակետների վրա:

Մեր կարծիքով՝ ձեր կողմը պատմական մեծ սխալ գործեց այս հարցում:

Սակայն Վեհափառ Հայրապետի համար այս հրավերը միշտ էլ մնում է այժմեական: Մայր Աթոռը, ինչպես երեկ, նույնպես և այսօր ուրախ պիտի լինի վերաշինվող Ս. էջմիածնում ողջունելու մեր մասին թյուր կարծիք տնեցող կողմի ներկայացուցիչներին, անկախ որևէ այլ հանգամանքից:

Այնուհետև, ձեր կողմը ի՞նչ պատճառ ուներ աճապարելու կաթոլիկոսական օծման գործում: Ինչո՞ւ գիտակցաբե՞ն այնպիսի մի օծում՝ կառավարվեց, որի հետևանքով հեռավոր հաշտության բոլոր կամուրջները փակվեցին:

Մինչև սեպտեմբերի 2-ի այդ արարողությունը, հաշտության մի ելք գտնելու բոլոր հնարավորությունները կային, և Վեհափառ Հայրապետը մի քանի պատվաբեր առաջարկներ կատարեց, սակայն այդ բոլորը չընդունվեցին: Վեհափառ Հայրապետը չլսեց և չհուսահատվեց: Օգոստոս 30-ի հեռագրով Վեհափառ Հայրապետը կոչ էր անում, որ հետաձգվեր այդ օծումը-ը, հայտնելով, թե ինքը հաշտության նոր առաջարկ ունի: Ինչո՞ւ նրանք չսպասեին մի քանի օր, որպեսզի գտնե լսելի նոր առաջարկը, որ ամբողջապես նրանց ի նպաստ էր: Նորին Ս. Օծովությունը այդ մասին գրել էր դեռևս շաբաթների առաջ Ամենապատիվ Ս. Գրեգորի Պատրիարքին: Վեհափառ Հայրապետը վրստահ էր, որ կլավիր իր այդ վերջին կոչը, և իր լավատեսության մեջ նա նույնիսկ խմբագրել էր հաջորդ հեռագիրն ևս, հղելու նորեն եպիսկոպոսին, անմիջապես որ նրանց կողմից դրական պատասխան ստացվեր:

Ահա՛ այդ հեռագրի բովանդակությունը. «Առաջնորդված միեռնույն սիրո և միության օգիտով, կառաջարկեմք գերագույն ճիգով հա-

մածայնություն գոյացնել կողմերու միջև, կազմելով հանձնախումբ՝ բաղկացած Ջեդո Մրբագնությունեն, Խաղաբաղկապությունեն, եղիշե արհեստականությունեն և կողմերու մեկական աշխարհական ներկայացուցիչներեն: Վերստին կաշ կրենեմ բուրդի՝ գործել իմաստությամբ, հեռատեսությամբ և շինարար ոգիով: Հաջողության մատրանով և օրհնությամբ՝ ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ:

Այդ հեռագիրը կյանքի չկողմեց սակայն: Եվ կրկին հարց ենք տալիս՝ ինչու՞ ալոքան համառ գտնվեց ձեր կողմը: Որպեսզի հարկադրեն մի «օծո՞ւմ», որ անսխալ թափաց է մեր պատմության մեջ: Եվ ինչքան թեթևամտությամբ ձեր թերթերը սկսեցին ձեռնադրության և օծման խորհրդի մասին նոր «տեսություններ» հայտնել ու պաշտպանել, այն նկատելով պարզ ծիսակատարություն, ձևական արարողություն և այլն, ձեռնադրության և օծման սուրբ խորհուրդների նկատմամբ մեր Եկեղեցու դարավոր ըմբռնումն ու ոգին իջեցնելով աշխարհական մի ընտրության հաջորդող որոշ ձևական արարողությանց աստիճանին:

Ինչպիսի, Հայաստանյայց Եկեղեցին ցանկանում էր հասցնել այնտե՞ղ, որ որևէ քաղաքական կուսակցություն պարտադրի՝ իր տեսությունը սրբազան խորհուրդների նկատմամբ: Եվ իրոք, սեպտեմբեր 2-ի արարողությունը, նրանց ասածի նման, սոսկ մի «ծիսական ձևակերպություն» հանդիսացավ, բայց բնավ երբեք՝ ձեռնադրություն և օծում: Հետո, բացի դավանաբանական և կանոնական տեսակետից, կա նաև մի ուրիշ ծանրակշիռ պարագա: Դա օտար եպիսկոպոսի մասնակցության հարցն է: Կարո՞ղ եք մի պահ մտածել, թե ինչպիսի՞ ցավալի կացության կարող էր մատնվել մի օր մեր Եկեղեցին, եթե մի այդպիսի մտայնություն տեղ գրավեր մեր եկեղեցական կյանքում և նախընթաց ստեղծված լիներ: Ուրեմն, մի գեղեցիկ օր էլ, ուրիշ օտար եպիսկոպոս կամ եպիսկոպոսներ, հարավից թե հյուսիսից, գան և Ամենայն Հայոց Կաթողիկոս օծեն: Այսպես մտածելն անգամ ո՞հիր է: Ավելորդ է ամեն մեկնություն:

Ու այս բոլորը գիտակցորեն կատարեցին ձեր կողմի մարդիկ, որպեսզի վերջնականորեն անդունդ բաց անեն Մայր Աթոռի և Անթիլիասի միջև, քաջ իմանալով, որ Ս. Էջմիածինը և մեր Եկեղեցու հոգևոր որևէ վերին իշխանություն երբեք էլ չպիտի կարողանան ընդունելի համարել նման մի կացություն, ինչքան էլ բարյացակամ ոգով առաջնորդվել ցանկանան:

Տեղին է այստեղ հիշել ժողովրդական առածը, թե «եսենթը մի քար գցեց ջուրը, հա-

ջար խելոք չկարողացան հանել», միայն թե, այս պարագային մի խենթ չէ քարը գցողը, այլ խելքով մարդիկ, որոնք սառը սրտով նստել, մտածել, որոշել և գործի են անցել, ու ապա հետևողականորեն փորձում են առաջ գնալ իրենց ծրագրերի գործադրության մեջ: Եվ սակայն, քանի քաջությունը չունեն իրենց մտածումներն ու որոշումները մեկ անգամից պարզելու, ժողովրդի աչքին փոշի ցանելու և քնացնելու համար, լրագրական «վարպետություն» են դիմում՝ անմեղ ու միամիտ ձևանալով, կամ նույնիսկ՝ հավատացյալ և էջմիածնասեր:

Պ. Խաչմանյան, դուք ձեր հոդվածների մեջ հարցերը ներկայացնում եք սենտիմենտալ ձևով: Մենք ուրախ կլինեինք, եթե հարցը այդպես ներկայանար իրոք: Բայց ձեր և մեր կամքից և պարագաներից անկախ, կա առարկայական մի իրողություն, այն է՝ արտասահմանում գործող քաղաքական մի կազմակերպության հատուկ ծրագրեր՝ Անթիլիասի իր ձեռքն առնելու, Սփյուռքի գաղութներն իրեն կապելու, և այդ պատվանդանի վրայից շարունակելու իր քաղաքական պայքարը Հայաստանի պետական իշխանության դեմ: Այս հարցում համոզվելու համար, բավական է կարդալ պ. պ. Սիմոն Վրացյանի, Ռուբեն Դարբինյանի և ուրիշների անցյալ տարվա ընթացքում գրած հոդվածաշարերը: Իհարկե, Մայր Աթոռի գործը չէ միջամուխ լինել քաղաքական կուսակցությանց քաղաքական պայքարներին, բայց Մայր Աթոռի պարտականությունն է ու գործը՝ թույլ չտալ, որ Եկեղեցին նման պայքարների թատերաբեմ դառնա:

Եկեղեցին քաղաքական պայքարի առարկա դարձնելու մի նոր և բնորոշ արտահայտություն է նաև «Հուլիսի» օրաթերթի հունվարի 9-ի խմբագրականը, ուր գրվել է. «Հիմնականը այն է, որ Սուլիս Միությունը հայտարարե, թե կհավատա քրիստոնեության...»: Մի քիչ ավելի ներքև կարդում ենք նույն խմբագրականում. «Կարևորը այն չէ, որ հանդուրժե էջմիածնա, միաբաններու և քրիստոնյաներու ներկայություն: Կարևորը այն է, որ հովանավորե զանոնք և քաշալիք...»:

Ուրեմն ձեր կողմն ընդունում է, որ Մայր Աթոռը վերաշինվում է, վերակազմակերպվում որպես հոգևոր կենտրոն, վերաբացվում են եկեղեցիները, ավելանում է միաբանության թիվը, աճում է Հոգևոր Ճեմարանը, քրիստոնյաները, այսինքն հայ հավատացյալները անկաշկանդ կերպով լցնում են եկեղեցիները: Բայց այդ բոլորը ձեր կողմի ղեկավար միտք «Հուլիսի»-ը կարևոր չի համարում, այլ պատգամում է, թե կարևո-

րը և հիմնականը այն է, որ Սովետական պետությունը քրիստոնեական հավատն ընդունի և այն հովանավորի: Ուրիշ խոսքով, ձեր կողմը ոչ թե Եկեղեցու և Մայր Աթոռի հետ գործ ունի, այլ՝ Սովետական պետության հետ, և «իր գործը» պիտի շարունակի, «որքան ատեն որ հորհրդային իշխանությունը կմնա երկրին մեջ», ինչպես գրում է «Հեռաբեր»-ը նույն խմբագրականում:

Նույն երևույթն է, նույն մտայնությունը և նույն հետևողականորեն հետապնդված քաղաքականությունը, որ դրսևորվում է բազմազան ձևերով, մտածելու և գործելու տարբեր մեթոդներով: Ձեր կողմի բուն նպատակը արտահայտվում է այդ վերջին նախադասության մեջ. «Որքան ատեն որ հորհրդային իշխանությունը կմնա երկրին մեջ»։ Եվ անշուշտ, տարբեր էլ չէր կարող լինել, բանի որ այդ կողմը հորհրդային իշխանության դեմ պայքարող կազմակերպություն է: Սակայն ինչու՞ պետք է կապել այդ քաղաքական պայքարը մեր Եկեղեցու հետ: Ի՞նչ պատասխանատվություն, ի՞նչ հանգամանք և ի՞նչ դեր ունեն Մայր Աթոռն ու մեր Եկեղեցին քաղաքական այս ներկա իրադրության մեջ: Եկեղեցին ի՞ր էությունը, ի՞ր կոչումով, ի՞ր առաքելությամբ չի կարող և չպետք է ունենա երբեք որևէ ֆալսֆական հանգամանք, ձգտում կամ դիրքավորում միջկուսակցական պայքարներում: Ու այս պետք է հասկանան բոլոր կողմերն անխափ:

Դարձյալ, «Հեռաբեր»-ի վերոհիշյալ խմբագրականում, դրսևորվում են նաև շատ հետադեմ և ժամանակավրեպ տեսություններ Եկեղեցու և Պետության փոխհարաբերությունների հարցում, անշուշտ լինելու աստիճան: Մեր օրերում, որևէ բանիմաց մարդ, որը տարրական հասկացողություն ունի նորագույն պետությունների իրավունքի հարցերում, և տարրական ծանոթություններ՝ քաղաքակիրթ պետությունների օրենսդրությանց մասին, չպիտի կարողանար պնդել, թե տրեք պետություն դավանում է որևէ կրոնական հավատ:

Արդյո՞ք Միացյալ Նահանգները կամ Ֆրանսիան, իբրև պետություններ, երբեկից միայն հայտարարություններ արե՞լ են, կամ անո՞ւմ են:

Հասարակ իրավական ճշմարտություն է, որ նորագույն քաղաքակիրթ պետությունները կղերապետական պետություններ չեն, ինչպես էր, օրինակ, ցարական Ռուսաստանը, ոչ էլ որևէ կրոնական դավանություն ունեն, և ոչ էլ այս կամ այն կրոնը կամ Եկեղեցուն են հովանավորում: Եվ՝ օրենքի պայմանների և հովանավորության տակ,

ապահովում են բոլոր քաղաքացիների խղճի ազատությունը, այսինքն՝ ապահովում են բոլորի համար հավասար կերպով հավատալու կամ չհավատալու ազատությունը, և հավատացյալներին՝ մի որևէ Եկեղեցու պատկանելու, կրոնական համայնք կազմակերպելու իրավունքը, ազատ ու անկաշկանդ: Այն պետությունները, որոնք հիմնված են իրավունքի հասկացողության, և ոչ թե կրոնական դավանության սկզբունքի վրա, չեն պատկանում որևէ Եկեղեցու և չեն հովանավորում որևէ Եկեղեցու, այլ միայն ապահովում են նրանց գոյությունը, կազմակերպությունը և գործունեությունը քաղաքացիների խղճի ազատության սկզբունքի վրա, օրենքով ճշտված պայմաններով: Այսպես է կացությունը այսօր նաև մեր Հայրենիքում: Եվ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու Հայ Եկեղեցին որևէ դժգոհություն չունեն այս օրինական կացությունից: Բայց դժգոհ է, պ. Խաչմանյան, ձեր կողմը, դժգոհ է «Հեռաբեր»-ը, որովհետև նա ցանկանում է անպայման, որ Սովետական պետությունը քրիստոնյա մկրտվի և հովանավորի Ս. Էջմիածինը, միաբանությունը, քրիստոնյաներին: Եվ այս բոլորի վրա նա պնդում է, որպեսզի իրեն համար ցանկալի եզրակացությունների հասնի, այսինքն այն, որ մեր պետությունը այս բոլորը չի կարող անել և չի անելու՝ «որքան ատեն որ հորհրդային իշխանությունը կմնա մեր երկրին մեջ»:

Ի սեր Աստուծո, թողե՛ք, որ Մայր Աթոռը, Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը ինքը պաշտպանի, կազմակերպի, վերաշինի իր հոգևոր կյանքը:

Սակայն մի՛ տարակուսեք, պ. Խաչմանյան, Մայր Աթոռն ու մեր Եկեղեցու հաղթանակի վրա: Եթե այսպես շարունակվի, ձեր կողմը մեծ սխալ կատարած պիտի լինի իր իսկ հանդեպ, եթե անխոհեմություն կատարեք Անթիլիասի պալատի տներն ու դեկավարը դառնալու ընդդեմ Մայր Աթոռի:

Տխուր է արձանագրել այն փաստը, որ Վեհափառ Հայրապետի ջանքերը մինչև այսօր դրական արդյունքներ չտվեցին Անթիլիասի եկեղեցական տագնալի հարցում: Անթիլիասը չհասկացավ դժբախտաբար Կահիրեի Նախկինպոսական ժողովի առաջարկությունների իրավ ոգին: Սակայն մենք, որ առօրյա մեր աշխատանքով կապված ենք Վեհափառ Հայրապետի ամենահարազատ հույզերի և մտածումների հետ, խորապես համոզված ենք, որ Նորին Ս. Օծությունը հաստատականորեն մնացել է լավատես ու վստահ է, որ ուշ կամ կանուխ Անթիլիասը պիտի ենթարկվի Հայ Եկեղեցու լրության

հեղինակության, և պիտի մոտենա Կահիրեի Համաձայնագրի ոգուն, ու վերջ պիտի գտնի ստեղծված շատ անբաղձալի այն կացությունը, որը տանում է դեպի հերձուհի: Եթե իրոք Անթիլիասը կամենում է հարգել Հայաստանյայց Եկեղեցու և Ս. Էջմիածնի հոգևոր հեղինակությունը և ընդունել Եկեղեցու միության ու անբաժանելիության սկզբունքը ըստ Կահիրեի Եպիսկոպոսական ժողովի Համաձայնագրի ոգու, հրաժարվելով Կիրիկյան Աթոռը Հայ Եկեղեցուց և ժողովրդից բաժանելու և միմյանց դեմ հակադրելու քաղաքականությունից, Մայր Աթոռը որևէ պատճառ չի գտնում համաձայնության չգալու համար:

Սակայն եթե ձեր կողմը անդրդվելիորեն վճռել է ամեն գնով Անթիլիասը դարձնել քաղաքական պայքարի պատվանդան, նպատակ ունենալով արտասահմանի հայության մի մասը հակադրել Մայր Աթոռին և Մայր Հայրենիքին՝ եկեղեցական հերձվածի միջոցով, այդ պարագային անշուշտ Մայր Աթոռի և մեր բոլոր բարի ցանկությունները և Վեհափառ Հայրապետի սիրտ ու միության կոշերը պիտի մնան «ձայն բարբառող յանապատի»:

Եթե իրոք այդ է առարկայական կացությունն այսօր, Մայր Աթոռին ու Ամենայն Հայոց Հայրապետությանն է մնում՝ պաշտպանել մեր Եկեղեցին և նրա միության սուրբ կանոնը, պաշտպանել Հայ Եկեղեցու միակ գլուխ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր հեղինակությունը, պաշտպանել Տանն Կիրիկիո Կաթողիկոսական Աթոռի անկախությունը, բոլոր հոգևոր և բարոյական զինքերով՝ համբերությամբ, վճռականությամբ, ներքին խաղաղությամբ և անայլալ լավատեսությամբ:



Քանի որ սիյուստրաֆայ մամուլը պետք եղածից ավելի աղմուկ բարձրացրեց Եղիշն արքեպիսկոպոսի հետ կապված տխուր պատմության շուրջ, և քանի որ դուք ևս ձեր նամակում լայն տեղ եք տվել նույն խնդրին, հարմար ենք նկատում մի քանի խոսքով անդրադառնալ նաև այդ հարցին:

Ճշմարտություններ են հետևյալ հաստատումները.

- 1) Նորին Ս. Օծուկյուն Վեհափառ Հայրապետը ոչ անձնապես և ոչ էլ եկեղեցական-հասարակական աշխատանքներում չէր ճանաչում Եղիշն արքեպիսկոպոսին, ինչպես չէր ճանաչել նաև մեր մյուս բարձրաստիճան հոգևորականներին: Այլևհին, Նորին Ս. Օծուկյուն Վեհափառ Հայրապետը Եղիշն արքեպիսկոպոսի մասին չէր իսկ լսել այն ծանրակշիռ պարագաները, ինչպիսիք հրապարակվեցին վերջին ամիսների ընթացքում:

- 2) Վեհափառ Հայրապետը Եղիշն արքեպիսկոպոսին հանդիպել էր առաջին անգամ 1951 թվականին Ս. Էջմիածնում, եպիսկոպոսական օծման ժամանակ, և նրան ճանաչել էր որպես քարոզչի, բանաստեղծի և իրոք արթուն միտք ու ճարտար լեզու ունեցող հոգևորականի: Վեհափառ Հայրապետը այդ օրերին Եղիշն արքեպիսկոպոսից ստացել էր լավագույն տպավորություն:

- 3) Վեհափառ Հայրապետը Տերտերյան արքեպիսկոպոսին երկրորդ անգամ հանդիպեց Անթիլիասում, ապա Կահիրեում, և այդ օրերին ժամանակ իսկ շոնեցավ մոտիկից ուսումնասիրելու և ճանաչելու նրան: Ընդհակառակը, փաստն այն է, որ պայքարի այդ սուր օրերին երկու կողմերին էլ հավասարապես մոտիկ մարդ էր Եղիշն արքեպիսկոպոսը և երկու կողմերն էլ հավասարապես դնահատում էին նրան, երկու կողմերի մարդկանց ու շրջանակների մեջ նա ի պատվի էր: Բացի դրանից, հստակ կերպով տեսնվում էր, թե Անթիլիասում երկուսի բաժանված Կիրիկյան միաբանության անդամների համար էլ Եղիշն արքեպիսկոպոսի խոսքը կշիռ ուներ և հաշվի էին առնում նրա հեղինակությունը: Ահա թե ինչու նա հարմարագույն անձը նկատվեց այդ պահին բանակցությունների համար երկու կողմերի միջև՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցչի:

- 4) Միայն Կահիրեի մեջ էր, որ Վեհափառ Հայրապետի ականջին հասան որոշ փսիղ-սուլճներ և մեղադրանքներ Եղիշն արքեպիսկոպոսի հասցեին, հատկապես Վեհափառ Հայրապետի Երուսաղեմ մուտքի վիզա չստանալու հարցում: Սակայն այդ բոլորը կասկածների և անհատական տրամադրությունների ձևի տակ էր, որ ներկայանում էին Վեհափառ Հայրապետին:

- 5) Երբ հոկտեմբերի սկզբին Մայր Աթոռ Ս. Էջմիածին հասավ Եղիշն արքեպիսկոպոսը, Վեհափառ Հայրապետը որևէ ստույգ տեղեկություն չունեի Երուսաղեմի անցողաբանների մասին: Երուսաղեմի դեպքերի մասին արտասահմանյան թերթերի արձագանքները Մայր Աթոռ հասան հոկտեմբերի վերջերին և նոյեմբերի սկզբներին: Մեծ ուշացումներով ստացվեցին նաև պաշտոնական որոշ նամակներ:

- 6) Եղիշն արքեպիսկոպոսի ամբաստանագրի պատճենը Տիրան արքեպիսկոպոսի դեմ, ստացվեց հոկտեմբերի սկզբին, առանց որևէ ստորագրության, առանց որևէ անվան և հասցեի: Մայր Աթոռը չէր կարող հենվել անստորագիր մի մեքենագրված թղթի վրա:

- 7) Որքան մեզ հայտնի է, Վեհափառ հետ տեսակցությանց ժամանակ, այդ ամբաստանագրի մասին խոսելիս, Եղիշն արքե-

պիսկոպոսը ժխտել է նման մի ամբաստանագրի իր կողմից տրված լինելը:

8) Երուսաղեմի Պատրիարքարանի առաջին պաշտոնական գրությունն այս մասին, 16 հոկտեմբերի թվակիր, Մայր Աթոռում ստացվեց հոկտեմբերի 29-ին, իսկ հեռագիրը տրվել էր հոկտեմբերի 12-ին: Միաբանական ժողովի արձանագրությունները, 24 հոկտեմբերի թվակիր, ստացվեցին նոյեմբերի 17-ին:

9) Այս բոլորի լույսի տակ, Վեհափառ Հայրապետը ճշտեց իր դիրքը այդ հարցում և Եղիշե արքեպիսկոպոսի մեկնումից առաջ, մինչև նոյեմբերի 5-ը, քանիցս նա խոսակցություն ունեցավ Եղիշե արքեպիսկոպոսի հետ, որի ընթացքում վերջինս խոստացավ Վեհափառ Հայրապետին՝ կամովին հեռանալ ամեն մի գործից, առանց Երուսաղեմ վերադառնալու, ու այդ խոստումով էլ նա մեկնեց Մայր Աթոռից:

10) Վեհափառ Հայրապետը, որպեսզի ավելի հանգամանորեն ծանոթանա Երուսաղեմի անցուղարձեռին և տիրող կացության, լիազորեց Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ գերաշնորհ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանին, որ Ս. Էջմիածնից իր վերադարձին, գնա Երուսաղեմ և այնտեղից մանրամասն զեկուցում ուղարկի Մայր Աթոռ: Սիոն սրբազանը այդ պարտականությունը հանձն առավ կատարել և հոկտեմբերի 31-ին մեկնեց Էջմիածնից, սակայն, դժբախտաբար, նա չկարողացավ իր ստանձնած առաքելությունը կատարել, Միջին Արևելքում և Եգիպտոսում պատերազմական վիճակ ստեղծված լինելու պատճառով:

11) Երբ Վեհափառ Հայրապետը իրազեկ դարձավ այն մասին, որ Եղիշե արքեպիսկոպոսը չի հարգում իր խոստումը, իր հշտակ դիրքը պաշտոնապես հաղորդվեց 13 նոյեմբերի թվակիր հեռագրով, որը հրատա-

րակվեց արտասահմանի մամուլում: Մինչև ձեր մամուլը, «Հուսաբեր»-ի հունվարի 8—9 թվակիր խմբագրականների մեջ, առանց քաշվելու հայտարարում էր, թե Վազգեն Կաթողիկոսը 27 նոյեմբերին է միայն, որ իր դիրքն է ճշտած Տիրան արքեպիսկոպոսին գրած իր նամակով: Եվ «Հուսաբեր»-ը երկարապատում խորհրդածություններ է անում այս «ուշացման» կապակցությամբ: Վերստին լրագրական մարզանքներ, պարզապես հակաէջմիածնական միջնորդու ու տրամադրություն ստեղծելու բնորոշ միտումով:

Եվ իրոք, ձեր մամուլը ինչքան թանաք հոսեցրեց Եղիշե արքեպիսկոպոսի խնդրի կապակցությամբ, ավելի ճիշտ ասած՝ Եղիշե արքեպիսկոպոսի տխուր պատմության առթիվ: Զեր մամուլի էջերում այս հարցի մասին հրատարակված հոդվածների քսան տոկոսը հազիվ Եղիշե արքեպիսկոպոսի մասին էր, մնացածը՝ խորհրդածություններ, ամբաստանություններ և վարկաբեկիչ հարձակումներ էին Մայր Աթոռի և առհասարակ մեր Եկեղեցու և եկեղեցականության հասցեին:

Ահա՛, հարգելի պ. Խաչմանյա՛ն, այն ամենը, որ կամեցանք գրել ձեզ և հանձնել այն հայ հավատացյալ ժողովրդի դատաստանին, համոզված լինելով, որ մեր պատասխանով ճշմարտության լույս սփռած պիտի լինենք մեր եկեղեցական կյանքի ճանապարհի վրա, ճանապարհ, որը պետք է տանի դեպի միություն և խաղաղություն, որպեսզի մեր աշխատանքները իրոք որ լինեն՝ «շինող, համադրող և ապրեցնող»:

Մենք ի սրտե աղոթող ենք, որ հաստատվի մեր սուրբ գործի ճանապարհը, և առավել արդյունավետ դառնա մեր Վեհափառ Հայրապետի աստվածահաճո աշխատանքը:

«ԷԶՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

